

ԸՆԿԵՐ ԱՏԱԼԻՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՈՎԵՏԻ ԴԵՊՈՒՏԱՏ ՔՎԵԱՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԵՋ ՄԵԾ ՎԵՐԵԼՔ Է ԱՌԱՋԱՑՐԵԼ

ԲԸՋՄԵՄԸՐԻ ՄԻՏԻՆԳՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կ Ի Ր Ո Վ Յ Ի Ն Ե Ր Ի Բ Ե Ր Կ Ր Ա Ն Ք Ը

Անհուն բերկրանքով աշխատավորների գեպուտատների Երևանի քաղաքային Սովետի գեպուտատության թեկնածու առաջադրելով ժողովուրդների հիմաստուն առաջնորդ Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինին, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի բանվորները, ինժեներները, տեխնիկները և ծառայողները անհամբեր սպասում էին առաջնորդի համաձայնությունը:

Հասավ բաղձալի օրը: — Մեծ Ստալինը համաձայնություն է տվել կիրովցիների կողմից քվեարկվելու աշխատավորների գեպուտատների Երևանի քաղաքային Սովետի ընտրությունների № 1 ընտրական օկրուգում որպես քաղաքային Սովետի գեպուտատ:

Այս ուրախալի լուրը կայծակի արագությամբ տարածվեց Ս. Մ. Կիրովի անվան գործարանի ցեխերում ու բրդադաններում, հասավ բոլոր բանվորներին, երախտագիտության վառ զգացմունքով լցնելով նրանց սրտերը: Մինչև երկրորդ հերթափոխի վերջը մնացած կարճ ժամանակը օգտագործելով ավելի արդյունավետ, կես գիշերին կիրովցիները հավաքվում են խանդավառ միտինգի:

Բաց անելով բազմամարդ միտինգը, գործարանի պարտիական կազմակերպության կոմիտեի քարտուղար ընկ. Զ. Առաքելյանը հաղորդման համար ձայնը տալիս է գործարանի ղեկավար ընկ. Գ. Հակոբյանին:

— Ընկերներ, — ասում է նա, — հենց նոր լուր ստացվեց, որ ընկեր Ստալինը համաձայնություն է տվել մեր գործարանի կողմից քվեարկվելու որպես Երևանի քաղաքային Սովետի գեպուտատ:

Այս խոսքերը ծածկվում են բուռն, երկար ժամանակ շրտող ծափահարություններով: Բոլորը ոտքի են կանգնում և օվազիա սարքում ի պատիվ ընկեր Ստալինի: Ամեն կողմից լրսվում են «կեցցե՛ դեպուտատության համաժողովրդական թեկնածու Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը», «Շնորհակալություն ընկեր Ստալինին մեծ վրատահովիտով համար», «կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը»:

— Համաձայնություն տալով քվեարկվելու Երևանի քաղաքային Սովետի գեպուտատ, — շարունակում է ընկ. Հակոբյանը, — մեր առաջնորդ ընկեր Ստալինը մեծ վստահություն ու կարողություն ունի աշխատավորներին հարգելու և նրանց անհատական կյանքը պաշտպանելու:

արկվելու Երևանի քաղաքային Սովետի գեպուտատ, — շարունակում է ընկ. Հակոբյանը, — մեր առաջնորդ ընկեր Ստալինը մեծ վստահություն ու պատիվ ցույց տվեց ռեպուբլիկայի բոլոր աշխատավորներին: Կիրովցիները, ոգեշնչված այդ վստահությամբ, կրթամատակերան իրենց ստեղծագործական աշխատանքի հաջողությունները, ընտրությունների օրը կդիմավորեն արտադրական նորանոր նվաճումներով, չեն խնայի իրենց ուժերն ու եռանդը, որպեսզի ժամկետից շուտ կատարեն հինգերորդ հնգամյակի պլանները:

Ամբիոնի վրա է անվանի բրիգադիր Ս. Հակոբյանը: Նա հուզված է նշանավոր իրադարձության առթիվ:

— Մեր արտերը ինչ են անհուն բերկրանքով այն բանի համար, — ասում է նա, — որ ժողովուրդների հանձարեղ առաջնորդ ընկեր Ստալինը իր համաձայնությունն է տվել աշխատավորների գեպուտատների Երևանի քաղաքային Սովետի գեպուտատ քվեարկվելու մեր ընտրական օկրուգում:

Կոմունիզմի կառուցման գործում ձեռք բերված մեր բոլոր նվաճումների համար մենք պարտական ենք Կոմունիստական պարտիային, մեր սիրելի առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինին, որն այսօր մեծ պատվի է արժանացրել մեզ: Որպես շնորհակալության խոսք, կիրովցիների կողմից նոր թափով կծավալի սոցիալիստական մրցությունը, արտադրական նորանոր նվաճումների կհասնի կոմունիզմի կառուցման հոյակապ ծրագրեր կենսագործելու ասպարեզում, կիրովցիներն անողոր պայքար կվճեն իրենց շարժումն եղած բերանբացության, անհոգության և բարեհոգության ամեն տեսակի երևույթների դեմ:

Համոզմունք հայտնելով, որ կիրովցիները մարտի 1-ին մեկ մարդու պես իրենց ձայնը կտան ընկեր Ստալինի օգտին, նա բացականչում է. «կեցցե՛ դեպուտատության համաժողովրդական առաջին թեկնածու, ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը»: Գահիճում նորից թնդում են ծափահարություններ, բոլոր կողմերից լսվում են շնորհակալության ջերմ խոսքեր:

Ստալանովական բրիգադիրին փոխարինում է երիտասարդ ինժեներ Ա. Հարությունյանը: Նա ասում է.

— Մեր թանկագին հայր և ուսուցիչ ընկեր Ստալինի համաձայնությունը քաղաքական և աշխատանքային նոր, հզոր վերելք կստեղծի գործարանի կոլեկտիվում, մեծ Ստալինի անունը, ինչպես միշտ, այս անգամ էլ աշխատանքային նորանոր սխրագործությունների կկոչի մեզ:

Գործարանի կոմունիստականների և բոլոր երիտասարդների անունից հավաստացնում եմ, որ ընտրությունների օրը մենք մեկ մարդու նման մեր ձայնը կտանք կոմունիզմի մեծ ճարտարապետ, մեր հայր և ուսուցիչ ընկեր Ստալինի օգտին, կոմունիզմի հաղթանակի օգտին:

Ջերմ ելույթ է ունենում տեխնիկ Ա. Կոստյուկովան:

— Իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ, մեր սիրելի Հայրենիքի ժողովուրդները հաջողությամբ աշխատում են մեր երկրում կոմունիզմի կառուցման մեծ նպատակին հասնելու համար: Ստեղծագործաբար հարստացնելով և զարգացնելով մարքսիստական-լենինյան գիտությունը, ընկեր Ստալինը գաղափարապես զինում է պարտիային ու ժողովուրդին՝ մեր մեծ գործի հաղթանակի համար:

Սովետական ժողովուրդը անսահման նվիրված է իր սիրելի առաջնորդ և ուսուցիչ հարազատ Ստալինին: Այդ նվիրվածությունը նա արտահայտում է կոմունիզմի կառուցման համար իր անձնվեր աշխատանքով: Բայց սովետական մարդկանց հատուկ շե նիրհել դափնիների վրա, հանգստանալ ձեռք բերածով: Մեծ Ստալինը միշտ էլ սովորեցնում է շոտոգանալ հաջողություններով, այլ բազմապատկելի դրանք, անընդհատ առաջ շարժվել:

Միտինգի մասնակիցները մեծ խանդավառությամբ ողջունի նամակ ընդունեցին՝ ուղղված գեպուտատության իրենց թեկնածու ընկեր Ստալինին: Գահիճում ներկա գտնվողները, ոտքի կանգնած, երկար ժամանակ շրտող օվազիա են սարքում ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության սիրելի առաջնորդ մեծ Ստալինի պատվին:

ԲՈՒՌՆ ԽԱՆԴԱՎ ԱՌՈՒԹՅՈՒՆ

Այն ուրախալի լուրը, որ ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը իր համաձայնությունն է տվել քվեարկվելու որպես Երևանի քաղաքային Սովետի գեպուտատ, կայծակի արագությամբ տարածվեց ավտոգործի գործարանում: Աշխատանքի ընդմիջումին գործարանի հարյուրավոր բանվորներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ, երջանկության ժպիտը դեմքերին, միտինգի հավաքվեցին սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի նկատմամբ իրենց անսահման սերն ու նվիրվածությունն արտահայտելու համար:

— Այսօր մեզ համար, Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորների համար ցնծության օր է, — բաց անելով միտինգը ասաց գործարկումի նախագահ ընկ. Պ. Սակոյանը: — Ընկեր Ստալինը իր համաձայնությունն է տվել քվեարկվելու որպես Երևանի քաղաքային Սովետի գեպուտատ: Դա մեծ երջանկություն է մեզ համար: Ընկեր Ստալինը հայ ժողովրդի ազատարարն է, մեր ամենասիրելի ու

թանկագին բարեկամը: Ընկեր Ստալինը սովետական ժողովրդի բոլոր հաղթանակների ոգեշնչող ու կազմակերպիչն է, նրա անունը ամբողջ աշխարհի աշխատավորների դրոշմն է՝ խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Ամբիոն է բարձրանում ստալանովական բրիգադիր Զ. Ավագյանը:

— Մեզ՝ սովետական մարդկանց համար չկա ավելի երջանիկ բան, քան այդքի և աշխատել ստալինյան դարաշրջանում, ընկեր Ստալինի ղեկավարությամբ պայքարել կոմունիստական հասարակարգի կառուցման համար: Քվեարկելով ընկեր Ստալինի օգտին, մենք կքվեարկենք մեր է՛լ ավելի երջանիկ և ուրախ կյանքի օգտին, ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման օգտին:

Մեր գործարանի կողմից նախընտրական այս օրերին աշխատում է բազմապատկված եռանդով: Արտադրության ներքին ռեզերվների հայտնաբերման ու օգտագործման, հումքի

տնտեսման շնորհիվ մենք գերակատարեցինք հունվար ամսվա արտադրական պլանը և շարունակում ենք բարձր արտադրողականությամբ աշխատել նաև փետրվար ամսում: Կալանդրների ցեխի բոլոր աշխատողների անունից ես հայտարարում եմ, որ մենք ավելի լայնորեն կծավալենք սոցիալիստական մրցությունը և մարտի 1-ին քվեատուփերին կմոտենանք փետրվար ամսվա արտադրական առաջադրանքը գերակատարած:

Այնուհետև մեկը մյուսի հետևից ելույթ են ունենում գործարանի դիրեկտորի տեղակալ ընկ. Ա. Գևորգյանը, արտադրական-տեխնիկական բաժնի վարիչ Զ. Պետրենկոն և ուրիշներ: Միտինգի մասնակիցները խոստացան մարտի 1-ին՝ տեղական Սովետների ընտրությունների օրը միահամուռ կերպով գնալ դեպի քվեատուփերը և մեկ մարդու նման ձայն տալ կոմունիստների ու անպարտիականների ստալինյան բռնի թեկնածուների օգտին:

Մ Ր Տ Ա Բ Ո Ւ Խ Ո Ս Ք Ե Ր

Երևանի քաղաքային Սովետի ընտրությունների Ստալինյան օպոնի № 1 ընտրական օկրուգում քվեարկվելու համար մեծ առաջնորդ, սիրելի ուսուցիչ ընկեր Ստալինի համաձայնության լուրը արագորեն տարածվեց Երևանի կարբիդի գործարանի ցեխերում, հերթափոխություններում, բրիգադաններում: Կարբիդագործները բերկրալի լուրը իմանալուն պես, հարազատ երկրին ավելի շատ արտադրանք տալու նշանաբանով, նախընտրական հերթափոխի կանգնեցին և մեծ Ստալինի անունը շուրթերին պայքարում են արտադրական բարձր ցուցանիշների հասնելու համար:

Երկ, հանդես գալով աշխատանքային ընդմիջման ժամին գումարված միտինգում, գործարանի ստալանովական բանվոր Վ. Վիրաբյանն ասաց.

— Մենք անչափ երջանիկ ենք, որ ձայն ենք տալու այն մարդուն, որը մեզ տանում է կոմունիզմի լուսաշող գազաթնբեր: Հայր Ստալինի անունը շուրթերին՝ մեր կարբիդագործները արտադրական նվաճումներով կզնան զեպի քվեատուփերը և միահամուռ ձայն կտան իրենց երջանկության օգտին:

Գործարանի երիտասարդության անունից ջերմ ելույթ է ունենում կոմունիստների ն. Կոստյուկը:

— Մենք անսահման ուրախ ենք, անսահման երջանիկ, որ մեծ վստահության ենք արժանացել: Մենք ձայն ենք տալու սովետական ժողովրդի հանձարեղ առաջնորդին, խաղաղության զորաշակարիին, երիտասարդության ամենալավագույն բարեկամին և հորը, սիրելի Ստալինին:

Այս ելույթները ունեցան նաև փականագործ Բ. Ալեքսեևը, ցեխի պետ Տ. Հովհաննիսյանը և ուրիշներ: Նրանք բոլորն էլ իրենց անսահման սերն ու երախտագիտությունը հայտնեցին մեծ առաջնորդ ընկեր Ստալինին և պարտավորվեցին ընտրությունների օրը դիմավորել արտադրական նորանոր նվաճումներով: